

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

***ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության Հայաստանի Հանրապետությունում
ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր
փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային
հանձնաժողովի***

19 օգոստոսի 2010թ.

ք. Երևան

2010 թվականի օգոստոսի 17-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահի տեղակալ՝
քարտուղար՝
անդամներ՝

Ա.Սահակյանը,
Ա.Առաքելյանը,
Գ.Ալեքսանյանը,
Ա. Դավթյանը,
Մ. Բուռնուսուզյանը

Օրակարգում

1. Նախկին մրցույթներում հաղթող ճանաչված կազմակերպությունների կողմից երթուղիները սպասարկող տրանսպորտային միջոցների համալրման և փոխարինման համար 2010 թվականի օգոստոսի 13-ին ներկայացված տրանսպորտային միջոցների համապատասխանության հարցը:

2. Կազմակերպչական այլ հարցեր:

Ելույթ ունեցավ՝

Հանձնաժողովի քարտուղար Ա.Առաքելյանը և նշեց, որ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն է դիմել՝

1.1. <<Գալակտիկա Տրանս Սերվիս>> ՍՊ ընկերությունը, Երևան(<<Կիլիկիա>> Ե/կ) – Արմավիր(Ե/կ) – Երևան միջմարզային միկրոավտոբուսային թիվ 207 երթուղու թվով 5 միկրոավտոբուս փոխարինելու խնդրանքով: Ներկայացված միկրոավտոբուսները մրցութային հանձնաժողովի կողմից գնահատվել են ստանալով 60 միավորից բարձր գնահատական, գերազանցելով (առանց լրացուցիչ միավորների) հանված միկրոավտոբուսների գնահատված միավորները.

Առաջարկեց՝ ամփոփելով մրցութային հանձնաժողովի անդամների <<Գալակտիկա Տրանս Սերվիս>> ՍՊ ընկերության կողմից ներկայացված տրանսպորտային միջոցների գնահատման արդյունքները՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման պահանջները և հաշվի առնելով, որ ընկերության կողմից

ներկայացված տրանսպորտային միջոցները բավարարում է գործող մրցութային կարգի 71-րդ կետի պահանջներին, ընդառաջել ընկերության խնդրանքին՝ Երևան(<<Կիլիկիա>> Ե/Կ) – Արմավիր(Ե/Կ) – Երևան միջմարզային միկրոավտոբուսային թիվ 207 երթուղու <<ԳԱԶ-322132>> մակնիշի 445 ԼՏ 63 (0292Լ), 443 ԼՏ 63 (1399Լ), 442 ԼՏ 63 (1397Լ), 273 ԼՏ 63 (0287Լ) և <<ԳԱԶ-32213>> մակնիշի 414 ԼՏ 63 (0289Լ) հ/հ և դ/հ միկրոավտոբուսները համապատասխանաբար փոխարինել <<ԳԱԶ-322132-220>> մակնիշի 053 ՕՕ 63, 051 ՕՕ 63, 052 ՕՕ 63, 154 ՍՍ 63, 155 ՍՍ 63 հ/հ միկրոավտոբուսներով:

Առաջարկությունն ընդունվել է՝ կողմ _____ դեմ _____ ձեռնպահ _____

1.2. <<Լիլիթ-Մարիամ>> ՄՊ ընկերությանը, Արթիկ(Ա/Կ) – գ.Հնաբերդ – գ.Ծաղկահովիտ - Արթիկ միջմարզային միկրոավտոբուսային թիվ 375 երթուղու մեկ միկրոավտոբուս փոխարինելու խնդրանքով: Ներկայացված միկրոավտոբուսը մրցութային հանձնաժողովի կողմից գնահատվել է ստանալով 60 միավորից բարձր գնահատական գերազանցել է (առանց լրացուցիչ միավորների) հանված միկրոավտոբուսի գնահատված միավորը:

Առաջարկեց՝ ամփոփելով մրցութային հանձնաժողովի անդամների <<Լիլիթ-Մարիամ>> ՄՊ ընկերության կողմից ներկայացված տրանսպորտային միջոցի գնահատման արդյունքները՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման պահանջները և հաշվի առնելով, որ ընկերության կողմից ներկայացված տրանսպորտային միջոցը բավարարում է գործող մրցութային կարգի 71-րդ և 73-րդ կետերի պահանջները, ընդառաջել ընկերության խնդրանքին՝ Արթիկ(Ա/Կ) – գ.Հնաբերդ – գ.Ծաղկահովիտ - Արթիկ միջմարզային միկրոավտոբուսային թիվ 375 երթուղու <<Ֆորդ Տրանզիտ>> մակնիշի 488 ՍՍ 14 (0670Լ) հ/հ և դ/հ միկրոավտոբուսը փոխարինել <<ԳԱԶ-32213>> մակնիշի 997 ԼԼ 01 հ/հ միկրոավտոբուսով:

Առաջարկությունն ընդունվել է՝ կողմ _____ դեմ _____ ձեռնպահ _____

1.3. <<Միվատրանս>> ՄՊ ընկերությունը, Ճամբարակ(Ա/Կ) – Վանաձոր(Ա/Կ) – Ճամբարակ միջմարզային ավտոբուսային թիվ 320 երթուղու պահուստային ավտոբուսը երթուղու սպասարկման ցուցակից հանելու խնդրանքով: Միաժամանակ ընկերությունը պարտավորվել է հանված ավտոբուսի փոխարեն սահմանված ժամկետում մրցութային հանձնաժողովի գնահատմանը ներկայացնել համարժեք ավտոբուս:

Առաջարկեց՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման 69-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, ընդառաջել ընկերության խնդրանքին՝ Ճամբարակ(Ա/Կ) – Վանաձոր(Ա/Կ) – Ճամբարակ միջմարզային ավտոբուսային թիվ 320 երթուղու սպասարկման ցուցակից հանել <<ՊԱԶ-672Ս>> մակնիշի 441 ԼՕ 43 (3059Լ) ավտոբուսը:

Առաջարկությունն ընդունվել է՝ կողմ _____ դեմ _____ ձեռնպահ _____

1.4. <<Գա-Լի>> ՄՊ ընկերությունը, Երևան(<<Կիլիկիա>> Ե/Կ) – գ.Հայկաշեն – գ.Զրառատ – Երևան միջմարզային ավտոբուսային թիվ 469 երթուղու պահուստային ավտոբուսը երթուղու սպասարկման ցուցակից հանելու խնդրանքով:

Առաջարկեց՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման 69-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, ընդառաջել ընկերության խնդրանքին՝ Երևան(<<Կիլիկիա>> Ե/Կ) – գ.Հայկաշեն – գ.Զրառատ – Երևան միջմարզային ավտոբուսային թիվ 469 երթուղու սպասարկման ցուցակից հանել <<Իկարուս-VYR>> մակնիշի 440 ԼՏ 67 (2671Լ) ավտոբուսը:

Առաջարկությունն ընդունվել է՝ կողմ _____ դեմ _____ ձեռնպահ _____

1.5. <<Սմարտսովթ>> ՄՊ ընկերությունը, Երևան(<<Սևանի փողոց>> Ե/Կ) – գ.Ակունք – Գ.Զրաշեն – Երևան միջմարզային միկրոավտոբուսային թիվ 267 երթուղու միկրոավտոբուսը երթուղու սպասարկման ցուցակից հանելու խնդրանքով: Միաժամանակ ընկերությունը պարտավորվել է հանված միկրոավտոբուսի փոխարեն

սահմանված ժամկետում մրցութային հանձնաժողովի գնահատմանը ներկայացնել համարժեք միկրոավտոբուս.

Առաջարկեց՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման 69-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, ընդառաջել ընկերության խնդրանքին՝ Երևան(«Սևանի փողոց» Ե/կ) – գ.Ակունք – Գ.Զրաշեն – Երևան միջմարզային միկրոավտոբուսային թիվ 267 երթուղու սպասարկման ցուցակից հանել «ԳԱԶ-32213» մակնիշի 409 ՍԼ 61 (1121Լ) հ/հ և դ/հ միկրոավտոբուսը:

Առաջարկությունն ընդունվել է՝ կողմ _____ դեմ _____ ձեռնպահ _____

1.6. «Տարոնի Արծիվ» ՍՊ ընկերությունը, Երևան(«Հյուսիսային» Ա/Կ) – Իջևան(Ա/Կ) – Երևան միջմարզային միկրոավտոբուսային թիվ 654 երթուղու միկրոավտոբուսը երթուղու սպասարկման ցուցակից հանելու խնդրանքով: Միաժամանակ ընկերությունը պարտավորվել է հանված միկրոավտոբուսի փոխարեն սահմանված ժամկետում մրցութային հանձնաժողովի գնահատմանը ներկայացնել համարժեք միկրոավտոբուս.

Առաջարկեց՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման 69-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, ընդառաջել ընկերության խնդրանքին՝ Երևան(«Հյուսիսային» Ա/Կ) – Իջևան(Ա/Կ) – Երևան միջմարզային միկրոավտոբուսային թիվ 654 երթուղու սպասարկման ցուցակից հանել «ԳԱԶ-322132-220» մակնիշի 456 ՍԼ 61 (0275Լ) հ/հ և դ/հ միկրոավտոբուսը:

Առաջարկությունն ընդունվել է՝ կողմ _____ դեմ _____ ձեռնպահ _____

1.7. «Վար-Ռուր» ՍՊ ընկերությունը, Երևան(«Կենտրոնական» Ա/Կ) – Արթիկ(Ա/Կ) – Երևան միջմարզային միկրոավտոբուսային թիվ 355 երթուղու միկրոավտոբուսը երթուղու սպասարկման ցուցակից հանելու խնդրանքով: Միաժամանակ ընկերությունը պարտավորվել է հանված միկրոավտոբուսի փոխարեն սահմանված ժամկետում մրցութային հանձնաժողովի գնահատմանը ներկայացնել համարժեք միկրոավտոբուս.

Առաջարկեց՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման 69-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, ընդառաջել ընկերության խնդրանքին՝ Երևան(«Կենտրոնական» Ա/Կ) – Արթիկ(Ա/Կ) – Երևան միջմարզային միկրոավտոբուսային թիվ 355 երթուղու սպասարկման ցուցակից հանել «ԳԱԶ-322132» մակնիշի 508 ՍՄ 14 (0782Լ) հ/հ և դ/հ միկրոավտոբուսը:

Առաջարկությունն ընդունվել է՝ կողմ _____ դեմ _____ ձեռնպահ _____

Որոշվեց

1.1. Երևան(«Կիլիկիա» Ե/կ) – Արմավիր(Ե/կ) – Երևան միջմարզային միկրոավտոբուսային թիվ 207 երթուղու «ԳԱԶ-322132» մակնիշի 445 ԼՏ 63 (0292Լ), 443 ԼՏ 63 (1399Լ), 442 ԼՏ 63 (1397Լ), 273 ԼՏ 63 (0287Լ) և «ԳԱԶ-32213» մակնիշի 414 ԼՏ 63 (0289Լ) հ/հ և դ/հ միկրոավտոբուսները համապատասխանաբար փոխարինել «ԳԱԶ-322132-220» մակնիշի 053 ՕՕ 63, 051 ՕՕ 63, 052 ՕՕ 63, 154 ՍՍ 63, 155 ՍՍ 63 հ/հ միկրոավտոբուսներով:

1.2. Արթիկ(Ա/Կ) – գ.Հնաբերդ – գ.Ծաղկահովիտ – Արթիկ միջմարզային միկրոավտոբուսային թիվ 375 երթուղու «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի 488 ՍՄ 14 (0670Լ) հ/հ և դ/հ միկրոավտոբուսը փոխարինել «ԳԱԶ-32213» մակնիշի 997 ԼԼ 01 հ/հ միկրոավտոբուսով:

1.3. Ճամբարակ(Ա/Կ) – Վանաձոր(Ա/Կ) – Ճամբարակ միջմարզային ավտոբուսային թիվ 320 երթուղու սպասարկման ցուցակից հանել «ՊԱԶ-672Ս» մակնիշի 441 ԼՕ 43 (3059Լ) ավտոբուսը:

1.4. Երևան(«Կիլիկիա» Ե/կ) – գ.Հայկաշեն – գ.Զրառատ – Երևան միջմարզային ավտոբուսային թիվ 469 երթուղու սպասարկման ցուցակից հանել «Իկարուս-VYR» մակնիշի 440 ԼՏ 67 (2671Լ) ավտոբուսը:

1.5. Երևան(«Սևանի փողոց» Ե/կ) – գ.Ակունք – Գ.Զրաշեն – Երևան միջմարզային միկրոավտոբուսային թիվ 267 երթուղու սպասարկման ցուցակից հանել «ԳԱԶ-32213» մակնիշի 409 ՍԼ 61 (1121Լ) հ/հ և դ/հ միկրոավտոբուսը:

1.6. Երևան(«Հյուսիսային» Ա/Կ) – Իջևան(Ա/Կ) – Երևան միջմարզային միկրոավտոբուսային թիվ 654 երթուղու սպասարկման ցուցակից հանել «ԳԱԶ-322132-220» մակնիշի 456 ՍԼ 61 (0275Լ) հ/հ և դ/հ միկրոավտոբուսը:

1.7. Երևան(«Կենտրոնական» Ա/Կ) – Արթիկ(Ա/Կ) – Երևան միջմարզային միկրոավտոբուսային թիվ 355 երթուղու սպասարկման ցուցակից հանել «ԳԱԶ-322132» մակնիշի 508 ՍՍ 14 (0782Լ) հ/հ և դ/հ միկրոավտոբուսը:

Հիմք՝ 2010 թվականի հուլիսի 22-ի մրցութային թերթիկը առդիր 1 թերթից, «Գալակտիկա Տրանս Սերվիս» ՍՊԸ-ի, «Լիլիթ-Մարիամ» ՍՊԸ-ի, «Սիվատրանս» ՍՊԸ-ի, «Գա-Լի» ՍՊԸ-ի, «Սմարտսուլթ» ՍՊԸ-ի, «Տարոնի արծիվ» ՍՊԸ-ի և «Վար-Ռուր» ՍՊԸ-ի գրությունները:

2. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

*Մրցութային հանձնաժողովի
նախագահի տեղակալ՝
քարտուղար՝
անդամներ՝*

*Ա.Սահակյան
Ա.Առաքելյան
Գ.Ալեքսանյան
Ա. Դավթյան
Մ. Բուռնուսուզյան*